ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ 2017-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

№	Գործողությունը	Ակնկալվող արդյունքը	Գործողության կատարման վերստուգելի չափանիշը	Պատասխանատու մարմինը և համակատարողները	Ֆինանսավորման աղբյուրը
1	2	3	4	5	6
1	Մշակել ՀՀ-ում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագիր	Սահմանված են ՀՀ-ում կանանց և տղամարդկանց նկատմամբ պետական քաղաքականության առաջնահերթ ուղղությունները հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, անկախ սեռից, հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանն ուղղված քայլերը:	Գենդերային քաղաքականության կարևոր սկզբունք է այն, որ տեղական ինքնակառավարման մարմինները զարգացման ծրագրերի մշակման հարցում հաշվի առնեն գենդերային իրավահավասարության հիմնախնդիրը	ՀՀ Վայոց ձորի մարզի ՏԻՄ-եր	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
2	Քայլեր ձեռնարկել պտղի սեռով պայմանավորված՝ հղիության արհեստական ընդհատումների կանխարգելմանն ուղղված արդյունավետ պայքարի համար	Ստեղծվել են պայմաններ պտղի սեռով պայմանավորված՝ հղիության արհեստական ընդհատումների թվի նվազման համար:	Մարզում իրականացվել է պտղի սեռով պայամանավորված՝ հղիության արհեստական ընդհատումների կանխարգելմանն ուղղված ծրագիր	<Save the children> միջազգային հասարակական կազմակերպություն ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ԸԿԵԻՊ բաժին	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ
3	Փոփոխություններ կատարել «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող իրավական ակտերում	Հստակեցվել են ՀՀ-ում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի ուղղորդման, նույնացման և աջակցության ընթացակարգերը:	Կազմակերպվել է <<Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց զոհերի նույնացման չափորոշիչները և զոհերի, ներառյալ երեխաների ուղղորդման ընթացակարգերը>> թեմայով 1-օրյա հանդիպում-քննարկում	<<ԱՄՔՈՐ–ՀԱՅԱՍՏԱՆ>> բարեգործական հիմնադրամ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ԸԿԵԻՊ բաժին	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:

4	Ապահովել առանց ծնողական խնամքի մնացած երեխայի՝ ընտանիքում ապրելու իրա-վունքը, բարձրացնել հաս-տատությունների բեռնա-թափման և խնամատար ընտանիքների ներդրման գործընթացի արդյունավետությունը	Խնամատար ընտանիքների ձևավորման գործընթացը կանոնակարգված է, խնամատար ընտանիքներում խնամվող երեխաների խնամքի նկատմամբ մշտադիտարկման մեխանիզմները ներդված են, խնամատար ընտանիքների տեսակները ու ձևերը սահմանված են, մանկատների բեռնաթափման և այլընտրանքային ծառայությունները զարգացել են:	Խնամքի հաստատությունների բեռնաթափման ծրագրի շրջանակում գիշերօթիկ հաստատությունից կենսաբանական ընտանիք է վերադարձել 2 երեխա, կասեցվել է 1 երեխայի ուղեգրումը հատուկ մասնագիտացված մսնկատուն, խնամակալություն է սահմանվել 4 երեխայի նկատմամբ	ՀՀ Վայոց ձորի մարզի խնամակալության և հոգաբարձության մարմիններ Մարզպետարանի աշխատակազմի ԸԿԵԻՊ բաժին Խնամքի հաստատություններ	Պետբյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ
5	Բարելավել որդեգրման գործընթացի կանոնա-կարգումը, ապահովել որդեգրման գործընթացի թափանցիկությունը, ներդնել որդեգրման ենթակա երեխաների անձնական (սահմանափակ) տվյալները, որդեգրել ցանկացող անձանց տրամադրելու մեխանիզմները	Որդեգրման ընթացակարգը բարելավված է, որդեգրման ենթակա երեխաների վերաբերյալ որոշակի անձնական տվյալներ կենտրոնացված հաշվառման վերցված երեխա որդեգրել ցանկացող անձանց տրամադրելու նոր ընթացակարգերը սահմանված են, որդեգրման գործընթացի թափանցիկությունն ապահովված է:	2017 թվականին որդեգրողի թեկնածու է հաշվառվել Վայոց ձորի մարզի երկու քաղաքացի, գործող համակարգի միջոցով նրանց տրվել է հնարավորություն ծանոթանալու որդեգրման ենթակա երեխաների վերաբերյալ որոշակի անձնական տվյալների	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ԸԿԵԻՊ բաժին	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:

6	Քայլեր ձեռնարկել ծնողների և ուսուցիչների շրջանում ներառական կրթության վերաբերյալ իրազեկվածության բարձրացման ուղղությամբ	Ծնողների և ուսուցիչների շրջանում բարձրացել է ներառական կրության վերաբերյալ իրազեկվածությունը: Աճել է հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններից ներառական կրթություն իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատություններ փոխադրված երեխաների թիվը:	Վայոց ձորի մարզում ներառական կրթություն է իրականացվում 9 դպրոցներում, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների թիվը՝ 148	ՀՀ Վայոց ձորի մարզի ներառական կրթության իրավունք ունեցող կրթական հաստատություններ, Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի հարցերով վարչություն, ԸԿԵԻՊ բաժին	Պետբյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ